ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀՈՒՆԻՍ 2026

Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան հրապարակել է **2026** թվականի «Իրավունքների համաշխարհային ինդեքս» զեկույցը. աշխատողների իրավունքների վիճակը շարունակում է վատթարանալ ամբողջ աշխարհում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մասնակցում է Աշխատանքի միջազգային համաժողովի **114**-րդ նստաշրջանին

Աշխատանքի միջազգային համաժողովի **114**-րդ նստաշրջանի շրջանակներում կայացել են կարԵՎոր հանդիպումներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ողջույնի խոսք
- Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան հրապարակել է 2026 թվականի «Իրավունքների համաշխարհային ինդեքս» զեկույցը. աշխատողների իրավունքների վիճակը շարունակում է վատթարանալ ամբողջ աշխարհում
- ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը, հունիսի 4-ին մասնակցել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջնաժամկետ ծախսերի ծրագրի ներկայացմանն ու քննարկմանը
- Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մասնակցում է Աշխատանքի միջազգային համաժողովի 114-րդ նստաշրջանին
- Աշխատանքի միջազգային համաժողովի 114-րդ նստաշրջանի շրջանակներում կայացել են կարԵՎոր հանդիպումներ
- Հանրային ծառայության օրվա առթիվ՝ բոուլինգի մրցույթ պետական և համայնքային կոլեկտիվների միջև
- Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը, Առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը միանում են Եվրոպայի #PublicServicesEmergency նախաձեռնությանը
- Անվտանգ աշխատանքային միջավայրի ձևավորման կարևորությունը՝ կրթության միջոցով
- «Ձեր փաստաբանը». Արհեստական բանականության ազդեցությունը աշխատանքային իրավունքների, աշխատաշուկայի վրա

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:
Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

2026 ITUC GLOBAL RIGHTS INDEX

THE WORLD'S WORST COUNTRIES FOR WORKERS

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է 2026 ԹՎԱԿԱՆԻ «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՆԴԵՔՍ» ԶԵԿՈՒՅՑԸ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՎԱՏԹԱՐԱՆԱԼ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան հրապարակել է **2026** թվականի «Իրավունքների համաշխարհային ինդեքս» զեկույցը, որը ներկայացնում է աշխատողների հիմնարար իրավունքների պաշտպանության վիճակն աշխարհի տարբեր երկրներում: Այս տարվա զեկույցը մտահոգիչ պատկեր է արձանագրում՝ փաստելով, որ աշխատողների իրավունքների խախտումները շարունակում են աճել, իսկ իրավիճակը բազմաթիվ երկրներում դարձել է համակարգային բնույթ կրող:

Նախկինում կայուն համարվող երկրները, այդ թվում՝ ԱՄՆ-ն և Ֆրանսիան, նույնպես հայտնվել են այն երկրների շարքում, որտեղ նկատվում է աշխատողների իրավունքների սահմանափակման միտումների աճ:

Աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ վիճակագրությունը հատկապես մտահոգիչ է: Երկրների **72** տոկոսում աշխատողները զրկվել են արդարադատության արդյունավետ հասանելիությունից, իսկ երկրների կեսում արձանագրվել են աշխատողների ձերբակալման կամ կալանավորման դեպքեր:

Աշխատողների նկատմամբ բռնության դեպքերը **2026** թվականին աճել են **6** տոկոսով: Խոսքի ազատության և խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակումներն աճել են **5** տոկոսով:

Միաժամանակ, քաղաքացիական ազատությունների խախտումներն աճել են 3 տոկոսով, իսկ արհմիությունների ղեկավարներն ավելի հաճախ են ենթարկվել հետապնդումների, ձերբակալությունների և որոշ դեպքերում՝ նույնիսկ ֆիզիկական բռնությունների ու սպանությունների:
Հայաստանի Հանրապետությունն այս տարի ևս ստացել է 3 գնահատական, որը բնորոշում է աշխատողների իրավունքների կանոնավոր խախտումների առկայությունը: Զեկույցում նշվում է, որ թեև Հայաստանում գործում են սոցիալական երկխոսության ինստիտուտներ, աշխատանքի ոլորտին առնչվող խորհրդակցություններում արհմիությունների կարծիքները հաճախ պատշաճ կերպով հաշվի չեն առնվում:
Զեկույցը նշում է, որ արհմիությունների դեմ ուղղված գործողություններ և հակաարհմիութենական գործելակերպեր արձանագրվել են նաև Հայաստանում՝ մի շարք այլ եվրոպական երկրների հետ միասին:
Հայաստանի վերաբերյալ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում պետական կառույցներում գործող, այսպես կոչված, «դեղին արհմիությունների» խնդրին: Ըստ զեկույցի՝ որոշ դեպքերում պետական մարմիններում գործող մեկուսացված ընկերության մակարդակի արհմիությունները ղեկավարվում կամ վերահսկվում են պաշտոնատար անձանց կողմից և չեն իրականացնում աշխատողների շահերի արդյունավետ պաշտպանություն:
Զեկույցում անդրադարձ է կատարվում նաև Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության կողմից բարձրացված խնդիրներին: Մասնավորապես, 2025 թվականի ընթացքում միությունն արձանագրել է արհմիությունների գործունեությանը միջամտելու և գործատուների կողմից վերահսկողություն իրականացնելու դեպքեր:
2026 թվականի «Իրավունքների համաշխարհային ինդեքսը» ևս մեկ անգամ ընդգծում է անկախ արհմիությունների, սոցիալական երկխոսության և կոլեկտիվ բանակցությունների կարևորությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության և արդար աշխատանքային հարաբերությունների հիմնարար բաղադրիչներ: Զեկույցում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ աշխատողների իրավունքների պաշտպանությունը շարունակում է մնալ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում և պահանջում է հետևողական ու համակարգված գործողություններ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

Աղբյուր՝ **https://www.ituc-csi.org/global-rights-index**

ՀԱՄԿ-Ի ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻՐՈՒՀԻ ՆԱԶԱՐԵԹՅԱՆԸ, ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆՆ ՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Նախարարի տեղակալներն իրենց ելույթներում ներկայացրել են առաջիկա երեք տարիների համար նախատեսվող հիմնական նպատակները՝ ընդգծելով սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետության բարձրացման, զբաղվածության խթանման, սոցիալական ծառայությունների հասանելիության ընդլայնման և խոցելի խմբերի աջակցությանն ուղղված միջոցառումների կարևորությունը: Նրանք անդրադարձել են նաև ոլորտում իրականացվող բարեփոխումներին, արդյունքահեն բյուջետավորման սկզբունքներին և պետական միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործման անհրաժեշտությանը:

Տիրուհի Նազարեթյանը իր խոսքում նշեց, որ արհմիությունների տեսանկյունից սկզբունքային է սոցիալական աշխատողների և խնամքի ծառայություններ մատուցող անձանց որոշ խմբերի աշխատավարձերի բարձրացումը, հատկապես, որ նրանք դառնում են առողջապահական ապահովագրական համակարգի շահառու, նաև ուղղեց որոշ ճշգրտող հարցեր բռնության ենթարկված անձանց և ապաստանների վերաբերյալ ներկայացված վիճակագրական տվյալների մասով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ 114-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

ժնևում անցկացվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Աշխատանքի միջազգային համաժողովի 114-րդ նստաշրջանը, որին մասնակցում են 187 անդամ երկրների պատվիրակությունները։

Հայաստանը ներկայացված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչներով։

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պատվիրակության կազմում են նախագահ Էլեն Մանասերյանը, Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների ճյուղային միության նախագահ Էդուարդ Փահլևանյանը, ինչպես նաև Արդյունաբերության աշխատողների ճյուղային միության նախագահ Արիստակես Դանիելյանը։

Էլեն Մանասերյանն իր ելույթում ընդգծել է, որ աշխատանքի աշխարհում ընթացող փոփոխությունները՝ տեխնոլոգիական զարգացումները, աշխատաշուկայի վերափոխումները և ժողովրդագրական մարտահրավերները, պահանջում են աշխատողների իրավունքները պահել տնտեսական և սոցիալական քաղաքականությունների կենտրոնում։ Նա կարևորել է արժանապատիվ աշխատանքի, սոցիալական պաշտպանության և աշխատանքի անվտանգության ապահովումը՝ ընդգծելով նաև Հայաստանում իրականացվող աշխատանքային բարեփոխումները և նվազագույն աշխատավարձի բարձրացումը։

Միաժամանակ նա նշել է ոչ ֆորմալ զբաղվածության, եկամուտների անկայունության և աշխատանքի նոր ձևերի հետ կապված խնդիրները՝ առանձնացնելով երիտասարդների համար որակյալ զբաղվածության և մասնագիտական զարգացման հնարավորությունների անհրաժեշտությունը։

Եզրափակելով՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահը վերահաստատել է արհմիությունների պատրաստակամությունը շարունակելու համագործակցությունը ԱՄԿ-ի, կառավարության և գործատուների հետ՝ արժանապատիվ աշխատանքի, սոցիալական արդարության և աշխատավորների կյանքի որակի բարելավման նպատակով։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ 114-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Աշխատանքի միջազգային համաժողովի 114-րդ նստաշրջանի շրջանակներում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի պատվիրակությունը մի շարք կարևոր հանդիպումներ է ունեցել ԱՄԿ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Մասնավորապես, հանդիպումներ են կայացել ԱՄԿ գլխավոր տնօրենի գրասենյակի տնօրեն և տարածաշրջանների հարցերով գլխավոր տնօրենի օգնական Բեատե Անդրեասի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Պիտեր վան Ռոոյիի, Աշխատողների գործունեության բյուրոյի (ACTRAV) տնօրեն Օլիվեր Ռյոպկեի, ինչպես նաև Աշխատողների գործունեության բյուրոյի (ACTRAV) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հարցերով պատասխանատու Սերգեյուս Գլովացկասի հետ:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանն ԱՄԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Պիտեր վան Ռոոյիի և Աշխատողների գործունեության բյուրոյի տնօրեն Օլիվեր Ռյոպկեի հետ հանդիպման ընթացքում ներկայացրել է Հայաստանում արհմիությունների առջև ծառացած մարտահրավերներն ու առաջնահերթությունները: Քննարկման ընթացքում ուրվագծվել են Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և ԱՄԿ-ի միջև հետագա համագործակցության ուղղությունները:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև Հայաստանի աշխատաշուկայի զարգացման արդի մարտահրավերները, սոցիալական գործընկերության նշանակությունը տնտեսական զարգացման գործընթացներում, ինչպես նաև տարածաշրջանում իրականացվող ԱՄԿ ծրագրերն ու եռակողմ գործընկերների ներգրավվածության ընդլայնման հեռանկարները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սոցիալական երկխոսության ամրապնդման հնարավորություններին և ԱՄԿ-ի հետ համագործակցության հետագա ուղղություններին:

Հանդիպումները վերահաստատեցին ԱՄԿ-ի և Հայաստանի սոցիալական գործընկերների միջև արդյունավետ համագործակցության կարևորությունը՝ նպաստելով արժանապատիվ աշխատանքի, սոցիալական արդարության և կայուն տնտեսական զարգացման օրակարգի առաջմղմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ՝ ԲՈՈՒԼԻՆԳԻ ՄՐՑՈՒՅԹ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ավարտվեց ևս մեկ սպորտային մրցաշար կոլեկտիվների միջև

Հայաստանի պետհիմնարկիների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը Հանարային ծառայության օրվա առթիվ կազմակերպեց հերթական բոլուլինգի մրցույթը պետական ու համայքնային կոլեկտիվների միջև

Հայաստանի պետհիմնարկների / Jul 1

https://arhmiutyun.org/2026/06/21/sport-competition-between-staffs-2026-june-bwl/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԻՄ-ԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՆՈՒՄ ԵՆ ԵՎՐՈՊԱՅԻ **#PUBLICSERVICESEMERGENCY** ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

https://www.facebook.com/EPSUnions/posts/pfbid02zMNniSMVaXd4nqwNGsQeA8En3gxV3Vr4yaf8Psdta5SPZwTLo952Zuf1Vq9G2jrrl

ԱՆՎՏԱՆԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական և անտառային համակարգերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախաձեռնությամբ Գորիսի բազմագործառութային պետական քոլեջում կազմակերպվել է հանդիպում-քննարկում՝ նվիրված անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրի ձևավորման կարևորությանը:

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական և անտառային համակարգերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Հասմիկ Ջահանգիրյանը, իրավախորհրդատու Նարեկ Ներսիսյանը և թիմի մյուս անդամները: Քննարկման հիմնական թեման էր «Կրթության դերը առողջ և անվտանգ միջավայրի և աշխատանքային պայմանների ապահովման գործում»:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց աշխատողների իրավունքների պաշտպանության, աշխատանքի անվտանգության պահանջների պահպանման, մասնագիտական ռիսկերի կանխարգելման և անվտանգ աշխատանքային մշակույթի ձևավորման հարցերին: Առանձնահատուկ ընդգծվեց կրթության և իրազեկվածության դերը, քանի որ աշխատանքային անվտանգության վերաբերյալ գիտելիքները պետք է ձևավորվեն դեռևս մասնագիտական կրթության փուլում և շարունակաբար զարգանան աշխատողի ողջ մասնագիտական գործունեության ընթացքում:

Մասնակիցները հնարավորություն ունեցան քննարկելու նաև գործնական իրավիճակներ, ներկայացնելու իրենց հարցերն ու մտահոգությունները և ստանալու մասնագիտական պարզաբանումներ:

Մասնակիցներին տրամադրվեցին տեղեկատվական և ուսուցողական նյութեր, ինչպես նաև անհատական պաշտպանության միջոցների նմուշներ, ինչը հնարավորություն տվեց առավել պատկերավոր ներկայացնելու աշխատավայրում անվտանգության կանոնների պահպանման և համապատասխան պաշտպանիչ միջոցների ճիշտ կիրառման նշանակությունը:

Նման հանդիպումները կարևոր հարթակ են երիտասարդ մասնագետների շրջանում աշխատանքի անվտանգության մշակույթի ձևավորման, աշխատողների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և առողջ ու անվտանգ աշխատանքային միջավայրի գաղափարի տարածման համար:

Անվտանգ աշխատանքային միջավայրը միայն կանոնների և պահանջների ամբողջություն չէ. այն աշխատողի արժանապատիվ աշխատանքի իրավունքի կարևոր բաղադրիչն է, իսկ դրա ապահովումը պահանջում է պետության, գործատուների, կրթական հաստատությունների և արհմիությունների համատեղ ու հետևողական աշխատանք:

«ՁԵՐ ՓԱՍՏԱԲԱՆԸ». ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ

https://www.youtube.com/watch?v=Rjk0ZN6rXQE

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ

Հեռ.՝ +37410 583682

www.hamk.am

hamk@hamk.am